# ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ, ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-ԻՆ, ՖՐԻՏՅՈՖ ՆԱՆՍԵՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

*«Հոգի Տեառն ի վերայ իմ. վասն որոյ և օծ իսկ զիս, աւետարանել աղքատաց առաքեաց զիս, քարոզել գերեաց զթողութիւն և կուրաց տեսանել...»*
*/ՂՈՒԿ. Դ 18-19/*

*Այս բառերը Հիսուս՝ մեր Երկնավոր Վարդապետը, արտասանեց, երբ օր մը իր հայրենի գյուղն էր գնացել՝ Նազարեթ, երբ այնտեղ, Իր սովորության համաձայն, գնացել էր սինագոգ, եբրայեցի ժողովրդի աղոթատունը, և երբ Իրեն տրվեց պարտականությունը եբրայեցի ժողովրդի Սուրբ Գրքից ընթերցում կատարելու, այն ատեն Նա բացավ Եսայի մարգարեի այս հատվածը և կարդաց ժողովրդին՝ ասելով. «Ոստծու Հոգին իմ վրա է, դրա համար ինձ օծեց, երբ ուղարկեց ի՞նչ անելու. աղքատներին բարի լուրը տանելու. Ավետարանը հաղորդելու, կույրերին աչքերը բանալու, գերիներին ազատություն շնորհելու»:*

*Երեկ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին մեր գիտակցությանը մեջ վերակոչեց և վերակենդանացրեց չորս Ավետարանիչների հիշատակը՝ Մատթեոսի, Մարկոսի, Ղուկասու և Հովհաննու: Նրանք, ովքեր գրի առին Քրիստոսի քարոզությունները, Քրիստոսի կատարած հրաշքները, Քրիստոսի պատմած առակները, մի խոսքով այն, ինչ որ Հիսուս եղել էր, այն, ինչ որ Հիսուս ասել էր, և այն, ինչ որ Հիսուս գործել էր, այդ բոլորը գրի առին, որպեսզի, իբրև Քրիստոսի կտակը և կյանքի ճանապարհը, գալիք սերունդներին փոխանցեին:*

*Սիրելի՜ հավատացյալներ, քրիստոնեությունը և քրիստոնեության հիմնադիր Աստվածորդին՝ Քրիստոս, Ինք չեկավ աշխարհ, որպեսզի մենք Իրեն ծառայենք, այլ եկավ, որ Ինքը՝ Աստված, մեզի ծառայի: «Ոչ եկի առնուլ պաշտօն, այլ պաշտել»: Պաշտել գրաբար լեզվի մեջ կնշանակե ծառայել: «Ոչ թե եկա, որ դուք ինձի ծառայություն մատուցեք, այլ եկա, որ ես ձեզի ծառայեմ»: Աստուծո սերը այնպիսի մի անպարփակելի ուժ է, որ չի կարող անհատ անձն ինքն իր մեջ պահել: Սերը այնպիսի ներքին մղում է, ուժ, որ մեզ մեր սեփական անձի բանտից դուրս կբերի, մեր անհատական նեղ գոյության շրջանակից դուրս կբերի և ծառայության, զոհողության մեջեն կարժանորի Աստուծո մեզի փոխանցած այդ սիրո ուժը: Աստված սեր է: Աստված մեկ անուն ունի: Աստված բառից դուրս, դա սեր բառն է: Եվ, հետևաբար, Եկեղեցին հիմնվել է, որ գնա դեպի ժողովուրդը, մտնի ժողովրդի մեջ, ծառայի ժողովրդին, ցավերը դարմանի, ճիշտ ճանապարհը ցույց տա: Այդ պատճառով է Հիսուս եկել՝ աղքատներին Ավետարանը քարոզելու,*

գերիներին ազատություն շնորհելու, հոգիով բեկվածներին, հուսահատներին հույս ներշնչելու, կույրերին լույս ցույց տալու: Եթե սրանք չկան Հիսուսի կյանքին մեջ, Հիսուս մի կուռք չէ, Հիսուս մի արձան չէ, որ պաշտենք Իրեն, ինչպես հեթանոսներն անում էին: Հիսուս Աստծու սիրուն մարմնացումն է Իր կյանքով, Իր խոսքով և Իր գործով:

Այսօր ես այս բառերն ընտրեցի որպես մեր կրոնական խորհրդածության առարկա ո՛չ նրա համար միայն, որ այսօր, այս սրբազան բեմից, ինչպես բոլոր Հայաստանյայց Եկեղեցիների՝ Հայաստանում և արտասահմանում, բոլոր Հայ Եկեղեցիների բեմերից այս հատվածը կարդացվեց, ո՛չ թե միայն նրա համար, այլ նաև նրա համար, որ ես նոր վերադարձա մի ճամփորդությունից, որտեղ այս ճշմարտությունը մարմնավորված տեսա մի ուրիշ ազգի մի զավակի մեջ, ում ծննդյան 135-ամյակն էր այս տարի:

Նորվեգացի ժողովուրդը, հեռու Հայաստանից, օտար հայ ժողովրդին, ո՛չ մի պատմական, կրոնական կամ մշակութային կապ չի ունեցել Նորվեգիան՝ Սկանդինավյան այդ երկիրը, Հայաստանին հետ: Բայց 19-րդ դարի վերջավորության և 20-րդ դարի առաջին երեք տասնամյակներին մի զավակ տվեց այդ ազգը՝ Ֆրիտյոֆ Նանսեն անունով, որ դուրս եկավ իր անհատից, դուրս եկավ իր ազգից, առանց թողնելու իր ազգը, առանց ուրանալու իր անձը, բայց տառապող հայ ժողովրդին պաշտպան կանգնեց և իր կյանքի վերջին 15 տարիները նվիրեց մարդասիրական գործին, երբ նա դարձավ 1920 թվականին այսօրվան Միացյալ Ազգերի Կազմակերպության՝ ՄԱԿ-ի նախատիպարը եղող Ազգերի Լիգայի գաղթականաց բաժանմունքի վարիչը Ժնև քաղաքում՝ Շվեյցարիայում: Մեր ժողովուրդը դուրս էր եկել մահվան հովիտից: 1915 թվականի ցեղասպանության ոճիրն էր գործվել, 1,5 միլիոն հայեր իրենց կյանքն էին տվել, հարյուր հազարներով հայեր աշխարհով տարտղնված, աքսորական, գաղթական վիճակի էին մատնվել, տուն չունեին, տեղ չունեին, տեր չունեին: Անորոշ, անստույգ ապագայի մղձավանջն ամեն օր իրենց հետ կտառապեցներ իրենց հոգին:

Դուք կարո՞ղ եք երևակայել մի պահ, որ չունենաք ո՛չ մի անձնագիր, ո՛չ մի ճանաչում և ոչ մեկ պետությունից: Կարո՞ղ եք լինել անքաղաքացի: Պատկանելության զգացումը որտե՞ղ կլինի մարդուն, երբ, օրինակի համար, ոչ մի գործ չենք կարող անել, որովհետև գործատերը չի գիտեր, թե դուք ո՞վ եք, ի՞նչ թուղթ ունիք: Ձեզ կարող ճամփորդել, որովհետև անձնագիր չունիք: Այդպես տասնյակ-տասնյակ հազարներով հայեր երբ դուրս դրվեցին Տաճկաստանից, անտեր, անտիրական, Ֆրիտյոֆ Նանսենը Ազգերի Լիգայի մեջ ասաց, որ մենք չենք կարող, Աստծու անունով չենք կարող այս ժողովրդին թողնել այս վիճակում: Եվ հատուկ անձնագիր ստեղծեց՝ միջազգայնորեն ճանաչված, բոլոր պետություններից ճանաչված և հայերին բաշխեց, որպեսզի ինքնության և արժանապատվության զգացում ունենան ու կարենան ապրել այդ երկրների մեջ, որտեղ նետվեր էին փշրանքների նման՝ ցեղասպանությունը գործած մեր թշնամու կողմից:

Ֆրիտյոֆ Նանսենը չգիտեմ հիմա, քանի՞-քանի՞ հազար հայերու հույս ներշնչեց, երբ հույսը կոտրվել էր նրանց մեջ, ազատություն շնորհեց, երբ ազատությունը կաշկանդվել էր մեր ժողովրդի կյանքին մեջ: Աղքատներին, գաղթականներին հաց ճարեց: Բայց այդ մարդու մեծ գործն այն էր, որ նա ուզեց գաղթականներին հայրենիք վերադարձնել և 1925 թվականին, սրանից 70 տարի առաջ, երբ մեզնից շատերը տակավին չէին ծնվել անգամ, նա եկավ Հայաստան, եկավ Սուրբ Էջմիածին, տեսնվեց Գևորգ Ե Խորհրդային Հայաստան, եկավ Սուրբ Էջմիածին, տեսնվեց Գևորգ Ե Կաթողիկոսի հետ և մի հսկա ծրագիր մշակեց իր օգնականների հետ միասին, թե ինչպես կարելի է Հայաստանի հողը ողողել, ժողովուրդը վերադառնա և իր հողից իր կյանքը հանի: Ասիկա մեծ իմաստություն մրն էր, մեզ համար ազգային նշանակություն ունեցող, իրեն համար մարդասիրական լայն հասկացողություն և հեռատեսություն ունեցող: Առանց հայրենիքի, առանց հայրենի օջախի մենք ի՞նչ կլինենք. մի ժողովուրդ՝ տարտղնված աշխարհում, միշտ վտանգի ենթակա՝ մեր ինքնությունը կորցնելու: Ուզեց հայրենիքը զորացնել, հայրենիքի հողից կյանք հանել այս ժողովրդի համար սրանից 70 տարի առաջ: Ես չեմ ուզում ավելի իր մասին խոսել: Գրքեր են գրվել իր մասին, և ինքն է գրել իր գիրքը հայոց մասին՝ «Հայաստան և Մերձավոր Արևելք» անունով: Սա ավելի քան 10-11 լեզուներով է թարգմանվել, և ես նրա անգլերեն ու ֆրանսերեն թարգմանությունները կարդացել ու տեսել եմ, թե ինչ մեծ սեր, ինչ խոր և ճիշտ հասկացություն է ունեցել մեր ժողովրդի պատմության, ճակատագրի, կյանքի, ճակատագրի մասին:

Այսօր ես ուզում եմ, որ մենք մեր աղոթքների մեջ նրան հիշենք և փառք տանք Աստծուն, որ նրա նման մի անձ է տվել թե՛ նորվեգացի և թե՛ մեր հայ ժողովրդին: Ես հատուկ հրավերով էի գնացել՝ հանուն մեր Եկեղեցու և հանուն մեր ազգի, բացումը կատարելու այն ցուցահանդեսին, որի մեջ ներկայացված էին իր կյանքի տարբեր-տարբեր հանգրվանները՝ իր ծնունդից սկսած մինչև իր մահը, մինչև 1930 թվականը: Այնտեղ ես ասացի. «Եկել եմ ութ միլիոն հայ ժողովրդի անունից՝ խոնարհվելու նրա հիշատակին, հոգեհանգիստ կատարելու նրա շիրմին և մեր ժողովրդի երախտագիտությունը հայտնելու այդպիսի մի մեծ բարերարի, որ պայքարեց մեր ժողովրդի ապագայի համար»: Նա շատ հուսախաբություններ ապրեց: Շատ ազգեր քաղաքական պատճառներով չուզեցին նրան օգնել, բայց ինքը շարունակեց, դիմեց մարդասիրական կազմակերպություններին, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությանը, Ամերիկա գնաց, հայ ժողովրդի զավակները շարժեց և իր ծրագրին կարևոր մեկ մասն իրականացրեց:

Հավատացյալնե՛ր, երախտագիտությունը ամենից կարևոր և ամենից բնորոշ ու հատկանշական, մարդկային առաքինություններից մեկն է: Ով չի կարող շնորհակալ լինել, Աստծո շնորհքին արժանի չէ: Եթե մեկը ձեզ մի բաժակ ջուր տա, «շնորհակալ եմ» ասեք: Մենք այնքան բարիք ենք տեսել այդ ժողովրդից և հատկապես Ֆրիտյոֆ Նանսենից, որ ես չէի

*կարող նրանց հրավերը չընդունել և ձեր բոլորի անունից, մեր ամբողջ Հայ Եկեղեցու անունից չգնալ և իրենց չասել.* «Ես գալիս եմ հիմա ո՛չ այն Հայաստանից, որտեղ գնաց Ֆրիտյոֆ Նանսենը 1925 թվականին: Ես գալիս եմ ձեզի ո՛չ թե բռնության տակ ապրող մի Հայաստանից, ո՛չ թե որբերով ու գաղթականներով լեցուն մի Հայաստանից, այլ ապատ ու անկախ մի հայրենիքից: Ես գալիս եմ ձեզի մի հպարտ ժողովրդից, որ իր ինքնությունը ազգերի մեջ պետականությամբ է արտահայտում այսօր»: *Մենք պետք ունենք, մեզ հարգելու համար նախ գիտնալ մեր նոր և անկախ հանրապետությունը զորացնել: Եթե մենք մեզ չզորացնենք, ապա ոչ ոք կարող է գալ և մեզ զորացնել: Դա ճշմարտություն է: Ով չի հասկանա, կնշանակի իր միտքը փակված է կամ իր սիրտը չի գործում: Ես գնացի այն Հայաստանից, որին երազն ուներ Ֆրիտյոֆ Նանսենը: Ուզում էր, որ Հայաստանը լինի ազատ և անկախ: Չտեսավ: Ինչպես իմ հայրը չտեսավ և ձեզնից շատերի հայրերը չտեսան: Բայց մենք ծունկի գանք այսօր Աստծու առաջ և փառք տանք Իրեն, որ մենք կարողացանք տեսնել: Բայց տեսնելը չի բավեր: Պահել պետք է, խորացնել պետք է, զարգացնել պետք է, և մենք ենք, բոլորս, Կաթողիկոսից սկսած, պետական բարձրագույն աստիճանի մարդկանցից սկսած մինչև ամենենք խոնարհ, պարզ այն տարրը այս ազգի, բոլորս պիտի ձեռք-ձեռքի տանք, որպեսզի Աստծու տված այդ շնորհքը, ազատ ու անկախ Հայաստանը մեզ համար դառնա մեր արյան գույնը և ոչ ոք մեր վրա ծիծաղի՝ ասելով, որ չկարողացան պահել, չկարողացան ամրացնել, չկարողացան զարգացնել:*

*Հետևաբար, Ֆրիտյոֆ Նանսենի պատգամը մեր ժողովրդին, եթե կարող եմ այսպես ասել, եթե ինքն այսօր գար, եթե երկնքից հանկարծ կարենար իջնել, պիտի ասեր մեզ.* «Սիրելի ժողովուրդ հայոց, զայի՛ն պահե, ամո՛ւր պահե և ծաղկեցո՛ւր քո սեփական երկիրը»: *Եվ այդ իմաստով ես ցանկանում եմ այսօր հատուկ հոգեհանգստյան արարողություն կատարել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի այս Սրբազնասուրբ Տաճարին մեջ: Այստեղ, Իջման Սեղանին Քրիստոսի ձեռքն է դիպել: Սրանից ավելի սուրբ տեղ ես չեմ կարող երևակայել հայ ազգի համար: Աստված Ինքը իջավ ու մեր հողի վրա այս եկեղեցու՝ Իր ներկայության տեղը ցույց տվեց: Եթե ամբողջ այս երկրագունդը ես աչքովս պտտեցնեմ ու երևակայեմ, այդ ամբողջ երկրագնդի համար սրբազնասուրբ տեղը այս Իջման Սեղանն է, ուր Աստված հանդիպեց հայությանը, այցելեց Հայաստան Իր Միածին Որդու միջոցով: Եվ այսօր, երբ մենք այստեղ գտնվում ենք մեր ժողովրդի հոգևոր սրտում, եկեք բոլորս աղոթենք խոնարհաբար առ Աստված, որ նրա հոգին երջանկացնի երկնքի մեջ և նորվեգացի ազգին տա բարգավաճ նոր շրջան, որպեսզի երկու ժողովուրդները փոխադարձ սիրո, հարգանքի և գործակցության ճանապարհով քայլեն, ինչպես Ֆրիտյոֆ Նանսենը քայլեց: Եվ դուք պետք է տեսնեիք, թե նորվեգացի ժողովուրդը որքան հրճվեց, երբ տեսավ, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը գնացեր է՝ այդ հարգանքը ընծայելու իրենց ազգին 70 տարիներ ետքը նրա մահից:*

Իմ խոսքը փակելուց առաջ ես ուզում եմ նաև մեր սիրեցյալ և հավատացյալ ժողովրդին ասել, որ նաև այսօր հոգեհանգիստ պիտի կատարենք մեր հայ ժողովրդի հոգևոր-մշակութային կյանքում այնքան մեծ վաստակ ունեցող Վենետիկի Մխիթարյան միաբանության ընդհանուր աբբահայր և նորոգ հանգուցյալ հայր Սահակ վարդապետ Մեմեճյանի հոգվույն համար: Հազիվ մի քանի ամիսներ անցեր էին, երբ նա ընտրվեր էր որպես նոր աբբահայր, բայց անողոք և մահացու հիվանդությունը նրան շատ կանուխ տարիքին տարավ այս աշխարհից: Ես նրան շատ մոտից էի ճանաչում: Քրիստոնյա մաքուր հոգի էր: Հայոց պատմության, Հայ Եկեղեցու ոգուն, մեր մշակութային արժեքներին լրիվ հարազատ ըմբռնումը և ապրումը ունեցող անձերից մեկն էր: Նա ոչ միայն ծանոթ էր մեր ժողովրդին, այլ նաև ծանոթացնողն էր մեր ժողովուրդը ուրիշներին: Իր գրական բեղուն վաստակը, հայագիտական ուսումնասիրությունները հետք կթողնեն: Այսօր ես ցանկանում եմ նրա հոգու համար աղոթել ձեր բոլորի հետ միասին և նաև խնդրել Աստծուց, որ զորացնի Մխիթարյան միաբանությունը՝ մինչև նոր աբբահոր ընտրությունը: Ցանկանում եմ ամեն տեսակի հաջողություն հայր Սամուել վարդապետ Բեհեստիլյանին, որ այժմ ստանձնել է ժամանակավոր կերպով ղեկավարության գործը Վենետիկի Մխիթարյան միաբանության:

Հետևաբար, հարգանք նրա հիշատակին, խաղաղություն նրա հոգուն և բարգավաճում Մխիթարյան միաբանության, որի ներկայացուցիչն արդեն մեզ հետ է այսօր, հանձին Կոմիտաս վարդապետին: Թող այս գաղափարներով զորանանք բոլորս և փառք տանք Աստծուն դարձյալ, որ արևոտ երկիր ունինք, և արևը, սակայն, երկրին երկնքից չի գա միայն, այլ մեզնից: Մեր քրտինքը, մեր աշխատանքը թող արև դառնա և ջուր դառնա մեր հայրենիքի բարգավաճությանը համար հավիտյանս հավիտենից. ամեն: